ԼՂԻՄ. ԱՐԴԱՐԱՑԻ ՎՐԴՈՎՄՈՒՆՔ

Ժողովրդական դեպուտատների Ստեփանակերտի քաղաքային խորհրդի գործկոմի նախագահ Մաքսիմ Միրզոյանի, ժողովրդական դեպուտատների Ասկերանի շրջանային խորհրդի գործկոմի նախագահի պաշտոնակատար Անդրանիկ Աղաբաբյանի, ժողովրդական դեպուտատների Մարտակերտի, Մարտունու և Հադրութի շրջանային խորհուրդների գործկոմների նախագահներ Վալերի Ջավադյանի, Սլավիկ Սեյրանյանի և Էլմիր Նավասարդյանի ստորագրությամբ քաց նամակ է ուղարկվել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի և ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի հասցեով:

Նամակում մասնավորապես ասվում է, որ վերջին ժամանակներս ադրբեջանական հանրապետության ղեկավարությունը, ի վիճակի չլինելով ճնշելու Արցախի բնիկ հայ բնակչության ազգային-ազատագրական շարժումը, մարզի ադրբեջանականացման կուրս է վերցրել: Այդ լայնընդգրկուն ծրագրի նպատակն է անհետականորեն փոխել ԼՂԻՄ-ի ժողովրդագրական հաշվեկշիռը ի նպաստ ադրբեջանական բնակչության, որպեսզի թվական գերակշռություն ստեղծելով, երկրամասի բնիկ հայ բնակչությանը զրկի իր սեփական հողի վրա ազգի սուվերենությունից և «փակի» Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը, որի էությունը Արցախի ժողովրդի ինքնորոշումն է:

Նամակում բերվում են բազմաթիվ փաստեր, որոնք հաստատում են ինքնավար մարզի ժողովրդագրական իրադրության փոփոխմանը միտված Ադրբեջանի գործողությունները: Ավելին, ինչպես նշվում է նամակում, ԼՂԻՄ-ի բնակչության ազգային կազմը փոխելու համար հանրապետական իշխանություններն օգտագործում են նաև Միջին Ասիայից փախած մեսխեթցի թուրքերին, որոնց առաջին «պատվիրակները» արդեն հայտնվել են Արցախում: Դա, գտնում են նամակի հեղինակները, նպատակ ունի էլ ավելի սրել ռեգիոնի իրադրությունը, հարուցել հայ բնակչության զայրույթի ալիք և միաժամանակ այրվող Ֆերգանայից շրջափակված Արցախ փոխադրված մեսխեթցի թուրքերին մանրադրամ դարձնել Ադրբեջանի ղեկավարության շովինիստական քաղաքական խաղում:

Նամակում մի շարք պահանջներ են ներկայացվում երկրի կենտրոնական մարմիններին, որպեսզի անհապաղ միջոցներ ձեռնարկվեն Ադրբեջանի իշխանությունների հակաղարաբաղյան գործողությունների կասեցման համար:

Նամակի հեղինակները նաև պահանջում են կարգավորել մարզի ադրբեջանական բնակավայրեր հասցվող բեռների վերահսկողությունն ու ստուգումը և ապահովել ԼՂԻՄ-ի հայկական բնակավայրերին պարենի ու անհրաժեշտ այլ բեռների առաքումների անվտանգությունը:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ